



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՏԱԻ ԻՆՏԵՐՆԵՇՆԱԼ
ՈՎԿՎԿՈՒՄՈՒՄԳԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ
TRANSPARENCY INTERNATIONAL
anti-corruption center

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ 2011-2013 ԹԹ.



ՄԱՍ 2.
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ





Սույն ծրագիրն իրականացվել է Բաց հասարակության
Հիմնադրամներ - Բուդապեշտի մարդու իրավունքների
նախաձեռնության ծրագրի և Բաց հասարակության Հիմնադրամներ -
Հայաստանի աջակցությամբ

This project was supported by Open Society Foundations - Budapest Human
Rights Initiative Program and Open Society Foundations - Armenia

Մ 283 Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2014. – 175 էջ

ՀՏԴ 336 (042.3)
ԳՄԴ 36.9(2)26

ISBN 678-9939-1-0024-1

Ծրագրի աշխատակազմ

Վարուժան Հոկտանյան
Ղեկավար

Արտակ Մանուկյան
Գնումների գծով փորձագետ

Վախթանգ Սիրադեղյան
Խմբագիր

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0025, Այգեստան, 9րդ փողոց, տուն 6
Հեռ.՝ +374-10-569910, 553069
Ֆաքս՝ +374-10-571399
Էլ. փոստ՝ info@transparency.am
www.transparency.am

Երևան 2014

© Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2014

**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

CONTENTS

ՆԱԽԱԲԱՆ3
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԸ ՀՀ-ՈՒՄ4
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ6
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ8
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ23
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ24
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ25
ԱՄՓՈՓԱԳԻՐ172

ՆԱԽԱԲԱՆ

Լավագույն փորձը շրջանակային համաձայնագիրը (ՇՀ) սահմանում է որպես “մեկ կամ ավելի պետական պատվիրատուների և մեկ կամ ավելի մասնակիցների միջև համաձայնություն, որի նպատակը տրված ժամանակահատվածում շնորհվելիք պայմանագրերի պայմանների սահմանումն է, մասնավորապես՝ գնի և, անհրաժեշտության դեպքում, նախատեսված որակի հետ կապված”¹:

ՇՀ ստեղծումը և գործարկումը տեղի է ունենում երկու փուլով. սկզբում ՇՀ շնորհվում է մեկ կամ մի քանի մասնակիցների, այնուհետև՝ մեկ կամ մի քանի մասնակիցների շնորհվում են առանձին պայմանագրերի պատվերներ:

1 European Commission’s Explanatory Note – Framework Agreements – Classic Directive CC/2005/03_rev 1 of 14.7.2005, Article 11(5), see more at <http://www.oecd.org/site/sigma/publicationsdocuments/48630016.pdf>

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԸ ՀՀ-ՈՒՄ

ՇՀ-ը մեծ կիրառություն ունեն ՀՀ-ում և մի շարք գնահատումներով ՇՀ-ով կնքված գնումները կազմում են ողջ պետական գնումների շուրջ 70-80%: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի I մասի 3-րդ կետի համաձայն, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը (ԳԱԿ) գնահատում է մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը, կնքում է ՇՀ:

Աղյուսակ 1-ում ներկայացված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը կրում է պարբերական բնույթ, ինչի նպատակով կառավարությունը դրանք ներառել է շրջանակային համաձայնագրով ձեռքբերման ենթակա ցանկի մեջ:

Աղյուսակ 1. ՇՀ կարգավորվող գնումների կազմն ու կառուցվածքը³

Ապրանքներ	Գրանցված կազմակերպությունների թիվը	Աշխատանքներ	Գրանցված կազմակերպությունների թիվը	Ծառայություններ	Գրանցված կազմակերպությունների թիվը
1. Վառելիք	74	2.1 Ավտոմոբիլային ճանապարհների պահպանում և շահագործում	24	3.1 Ինտերնետային կապի տրամադրում	28
2. Սննդամթերք	503	2.2 Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող արհեստական կառույցների պահպանում և շահագործում	19	3.2 Ավիասպասարկում	78
3. Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր	371	2.3 Տպագրություն	162	3.3 Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում	79
4. Դեղորայք և պատվաստանյութեր	129	2.4 Հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրություն	17	3.4 Հեռուստատեսային ծառայություն	24
5. Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելու համար անհրաժեշտ կենսապատվաստուկներ և ախտորոշիչ միջոցներ	15	2.5 Ավտոմեքենաների պետական համարանիշերի պատրաստում	4	3.5 Անասնաբուժություն և բույսերի պաշտպանություն	21
6. Ավտոպահեստամասեր	200	2.6 Սպառազինությանն օժանդակող աշխատանքներ	40	3.6 Համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակում և սպասարկում	99

2 Տես ԱԺ-ում փոխվարչապետի զեկույց ՎՊ բացահայտումների մասով:

3 2013 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ

7. Շինանյութեր	403	2.7 Մեղանյութերի և կրծքանշանների պատրաստում	17	3.7 Վերապատրաստման ծառայություններ	53
8. Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր	313	2.8 Կանաչապատման աշխատանքներ	37	3.8 Ձևան պաշարների համարման ծառայություններ	5
9. Գրասենյակային գույք	260			3.9 Սարքերի և սարքավորումների սպասարկում	235
10. Հանդերձանք	194			3.10 Պատճենահանում	53
11. Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ	416			3.11 Մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնում	134
12. Էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ	270			3.12 Արհիվացում	21
13. Գրասենյակային կահույք	282			3.13 Սպառազինության օժանդակող ծառայություններ	41
14. Հաշմանդամների լսողական ապարատներ և սայլակներ	21			3.14 Թարգմանություն	40
15. Քիմիական նյութեր	113			3.15 Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստում և վերանորոգում	4
16. Բժշկական սարքավորումներ և գործիքներ	130			3.16 Ացքի պրոթեզների և ծայրաստեղծ սարքերի տեղակայում	4
17. Ծաղիկներ և ծաղկեպսակներ	52			3.17 Մամուլում հայտարարությունների հրապարակում	13
18. Սպառազինության օժանդակ ապրանքանյութական միջոցներ	89			3.18 Տվյալների փոխանակման, տեղեկատվական, գերատեսչական համակարգչային զրոյալ ցանցի սպասարկում	39
19. Գյուղատնտեսական թունանյութեր	20			3.19 Ավտովացում	38
20. Լրատվամիջոցներ	20			3.20 Հացաթխում	102
21. Ավտոմեքենաներ	54			3.21 Լվացք	26
22. Սերվված բնական գազ	60			3.22 Տրանսպորտային փոխադրումներ	54
				3.23 Ֆուցանակների պատրաստում և տեղադրում	52
				3.24 Դրամական միջոցների վճարում	0
				3.25 Ֆուրջետների կազմակերպում	47
				3.26 «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնումների համակարգողի ծառայություններ	7
				3.27 «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ներքին աուդիտի ծառայություններ	12
Ընդամենը	3989		320		1309

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ) հասարակական կենտրոնի կողմից ՇՀ մասով մոնիտորինգ իրականացնելու և եզրակացություններ կատարելու համար հիմք է հանդիսացել www.gnumner.am կայքի տեղեկատվությունը:

Մեր կողմից սահմանվել են մոնիտորինգային հետևյալ չափանիշները (տես ստորև), որոնց մասով իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ:

1. Կազմակերպությունների (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ) որպես ՇՀ մասնակից գրանցում: Այս չափանիշի մոնիտորինգը նպատակ է հետապնդում գնահատել ՇՀ անդամակցելու գործընթացի մատչելիությունը:
2. ՇՀ մրցույթների թափանցիկություն: Այս չափանիշի մոնիտորինգի շրջանակներում պարբերաբար այցելել ենք www.gnumner.am կայք.
 - ա) ՇԳ-ով պլանավորված գնումների,
 - բ) կնքված պայմանագրերի, մասնավորապես, մրցույթների մասին հաշվետվությունների (տես նկար 1),
 - գ) ՇՀ-ի մասով վիճակագրություն հայթայթելու համար:

Բացի այդ իրականացվել է ՇՀ ուսումնասիրություն, մասնավորապես.

1. ՇՀ միտումների ուսումնասիրություն: Այս չափանիշի ուսումնասիրության շրջանակներում պարբերաբար այցելել ենք www.gnumner.am կայք՝ ՇՀ հաշվետվությունները ներբեռնելու, դրանք որոշակի ֆիլտրով մշակելու և վերլուծելու նպատակով: Աղյուսակներում ապրանքների գծով՝
 - Քանակային վերլուծություն - ներկայացված են 10 և ավելի մրցույթ հաղթած մասնակիցների ագրեգացված տվյալները,
 - Գումարային վերլուծության - ներկայացված են 10 մլն. դրամ և ավելի գումարով մրցույթների մասնակիցների ագրեգացված տվյալները,Աշխատանքների և ծառայությունների գծով՝
 - Քանակային վերլուծություն - ներկայացված են 5 և ավելի մրցույթ հաղթած մասնակիցների ագրեգացված տվյալները,
 - Գումարային վերլուծություն - ներկայացված են 5 մլն. դրամ և

ավելի մրցույթների մասնակիցների ագրեգացված տվյալները,

2. ՇՀ մրցույթների ռիսկայնության գնահատում: Այս չափանիշի ուսումնասիրության շրջանակներում պարբերաբար այցելել ենք www.gnumner.am կայք՝ ՇՀ հաշվետվությունները ներբեռնելու, դրանք որոշակի ֆիլտրով մշակելու և ռիսկային տարրեր պարունակով մրցույթները վերհանելու նպատակով, մասնավորապես նվազագույն գնային առաջարկ հիմքով այն մրցույթները, որտեղ հաղթող են ճանաչվել ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները, միևնույն գնման առարկա համար առաջարկված գնային առաջարկների միջև էական տատանումներով մրցույթները և այլն:

Որպես տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ Գնումների մասին օրենքը (ԳՄՕ), ՀՀ ֆինանսների նախարարության (ՖՆ)՝ www.minfin.am և www.gnumner.am կայքերը:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ՇՀ համակարգին անդամակցելու մատչելիությունը: ՇՀ-ի համակարգին անդամակցելու համար մասնակիցների կողմից ԳԱԿ է ներկայացվում դիմում, որից հետո ԳԱԿ-ը հաստատված ընթացակարգերով գնահատում է մասնակիցների ՇՀ մասնակցելու իրավունքը և որակավորումը:

2011թ.

ՇՀ կնքած մասնակիցների մեջ մեծ է ապրանքների մատակարարների քանակը 625 մասնակից կամ տվյալ տարվա ընդհանուր գրանցվածների շուրջ 67%: Ծառայությունների մատուցման համար գրանցվել է 227 մասնակից (25%): Համեմատաբար փոքր է աշխատանքների կատարման համար դիմող մասնակիցների թիվը՝ 75 (8.1%): ՇՀ գնումներ կատարելու համար 2011թ. ԳԱԿ-ի կողմից հայտարարվել է 57 ընթացակարգ:

2012թ.

2012թ. ընթացքում ԳԱԿ-ը գնահատել է, գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման, շուրջ 2000 դիմում: 10 դիմում չի քննվել՝ կազմակերպությունների կողմից գրանցումից հրաժարման պատճառով: 3 մասնակցի գրանցման հայտ մերժվել է՝ հրավերով սահմանված չափանիշներին չհամապատասխանելու պատճառով: 2012թ. ՇՀ կնքած մասնակիցների մեջ մեծ է եղել հատկապես ապրանքների մատակարարների քանակը՝ 1515 մասնակից (տվյալ տարվա ընդհանուր գրանցվածների շուրջ 73%): Աշխատանքների կատարման համար գրանցվել է 122 մասնակից (5.9%): Ծառայությունների մատուցման համար գրանցվել է 430 մասնակից (21%):

2013թ. I եռամսյակ

2013թ. I եռամսյակի ընթացքում ԳԱԿ-ում գրանցվել է 1612 մասնակից, որից 1206-ը՝ ապրանքների մատակարարման, 63-ը՝ աշխատանքների կատարման, 343-ը՝ ծառայությունների մատուցման գծով: Գրանցված մասնակիցների ամբողջական պատկերը հրապարակման պահին ներկայացված է Աղյուսակ 1-ում: Կցանկանայինք նշել, որ հետաքրքրությունն առավել մեծ է ապրանքների դեպքում, որից

4 Պետք է նշել, որ ԳԱԿ-ի կողմից իրականացվում է ոչ միայն մասնակիցների գրանցում, այլև նաև գրանցման դադարեցում: Մասնավորապես, 2013թ. ապրիլի 1-ի դրությամբ դադարեցվել է 52 մասնակցի գրանցում: Արդյունքում հրավերով սահմանված չափանիշներին համապատասխան փաստաթղթեր ներկայացրած մասնակիցների դիմումների հիման վրա կնքվել է 2067 ՇՀ:

առանձնանում է սննդամթերքի մատակարարումը: Ինչպես նկատում ենք 2011թ. գրանցված մասնակիցների քանակը զգալիորեն քիչ է հաջորդ ժամանակահատվածների համեմատ, ինչը, մեր կարծիքով, հիմնականում պայմանավորված է եղել մասնակիցների վատ տեղեկացմամբ:

Ամփոփելով հարկ է նշել, որ միտումները վկայում են մասնակիցների գրանցման ակտիվության շարունակական աճի մասին, ինչը դրական երևույթ է, և մասամբ պայմանավորված է ՇՀ կատարվող գնումների շրջանակի ընդլայնմամբ և իրազեկվածության աճով: Որպես հիմնախնդիր պետք է նշել, որ ՇՀ դեպքում անհնարին է որոշել ինչպես մասնակցի ինքնությունը, այնպես էլ ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը: Բացի այդ, հնարավոր են դեպքեր երբ, օրինակ սև ցուցակում ներառված մասնակիցը գրանցի նոր կազմակերպություն և այդ կազմակերպության միջոցով մասնակցի ՇՀ-ին: Այնուհանդերձ, մեր կարծիքով, գործունեության այս ուղղությունն էական կոռուպցիոն ռիսկեր⁵ չի պարունակում:

2. ՇՀ թափանցիկություն:

ա) ՇԳ-ով պլանավորված գնումներ: Հարկ է նշել, որ 2011 և 2012թթ-ին www.gnumner.am կայքում “գնումների պլաններ” բաժնում խիստ սահմանափակ թվով մարմիններ էին ներկայացրել իրենց պլանները /ընդամենը մոտ 20 մարմին/: Իրավիճակը զգալիորեն բարելավվել է 2013թ, որի մասին են վկայում հետևյալ թվերը,

- Պետական կառավարման մարմիններ բաժնում ներկայացված են շուրջ 50 մարմնի գնումների պլաններ, իսկ մրցույթի ձևերի մեջ առկա են նաև /ՇՀ/,
- Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ) բաժնում ներկայացված են շուրջ 370 մարմնի գնումների պլաններ, իսկ մրցույթի ձևերի մեջ առկա են նաև /ՇՀ/,
- Առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ բաժնում ներկայացված են շուրջ 3000 մարմնի գնումների պլաններ, իսկ մրցույթի ձևերի մեջ առկա են նաև /ՇՀ/,
- Հանրային կազմակերպությունների մասով չկա ոչ մի տվյալ,

Կցանկանայինք նշել, որ ՖՆ կայքում՝ www.minfin.am պետական բյուջեի հավելվածներում հնարավոր է գտնել պետական մարմինների գնումների պլանը, որտեղ նշված է նաև տեղեկատվություն գնման ընթացակարգերի մասին /ՇՀ/⁶:

5 ՇՀ գրանցման ռիսկերից կարող են լինել

6 <http://minfin.am/up/budget/havelvacner/PDFhavelvacner24.12.12.rar>, Հավելված 12

Այնուհանդերձ, **մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ** համակարգը հետագա բարելավման կարիք ունի, մասնավորապես գնումների պլանների տեղադրման հաճախականությունը չի կանոնակարգվում ու իրականացվում է քառսային ձևով: Հաջորդ հանգամանքը ինչին կցանկանալինք անդրադառնալ. դա պլանավորված և փաստացի ընթացակարգերի համեմատական վերլուծության բացակայությունն է (գումարային կամ քանակային): Գոնե պետական կառավարման մարմինների մասով նման վերլուծության առկայությունը շահեկանորեն կավելացնէր համակարգի նկատմամբ վստահության աստիճանը: Բացի այդ կան դեպքեր, երբ պատվիրատուները հայտարարված գնման ընթացակարգի վերաբերյալ ոչ բոլոր գրանցված մասնակիցներին են ծանուցում:

բ) ՇՀ-ով իրականացված մրցույթների մասին վիճակագրական տեղեկությունների/ հաշվետվությունների առկայությունը և միտումները: Մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ 2011թ. հուլիսից մինչև 2012թ նոյեմբեր ՇՀ-ի գծով ամսական հաշվետվություններն անկանոն պարբերականությամբ տեղադրվում էին գնումների պաշտոնական կայքի «Հաշվետվություններ» բաժնում: Սկսած 2012թ նոյեմբերից, (երբ հաշվետվությունների տեղադրման գործընթացը ՖՆ-ից փոխանցվեց ԳԱԿ-ին) այդ հաշվետվությունները դարձել են նվազ մատչելի (տես նկար 2):

2011թ. հունվարից-հուլիս ժամանակաշրջանի համար ՇՀ հաշվետվությունները բացակայում են: Ավելին, ՇՀ-ի հաշվետվությունների տեղադրման գործընթացն իրականացվում է անկանոն սկզբունքներով և ժամանակային լագերով (օրինակ՝ 2013թ սեպտեմբերի դրությամբ, կայքում ՇՀ հաշվետվություններն առկա են մինչև 2013թ. մայիսը, տես նկար 3): Կարծում ենք ՇՀ-ի ամսական հաշվետվությունների հրապարակման պարբերականության/ հաճախականության կանոնակարգումը, կմեծացնի տվյալ հանրային տեղեկատվության օգտակարությունը:

գ) www.gnumner.am կայքում ՇՀ-ի հետ կապված վիճակագրական տեղեկությունների առկայությունը: Մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ ՇՀ-ի հետ կապված վիճակագրությունը էական բարելավման կարիք ունի⁷:

7 2011-2012թթ. համար չկան տեղեկություններ հայտարարված ՇՀ-ի, չկայացած ՇՀ-ի, մասնակցության վերաբերյալ:

3. ՇՀ միտումների ուսումնասիրությունը: Ստորև ներկայացված են 2011թ. հուլիս-դեկտեմբեր և 2012թ հունվար-դեկտեմբեր, ինչպես նաև 2013թ. I եռամսյակի ՇՀ արդյունքում կնքված պայմանագրերի վերլուծությունը:

Սույն ուսումնասիրության շրջանակում ռիսկերի դասակարգման նպատակով տարանջատվել են չորս խումբ մրցույթներ, որոնք ընդգրկում են ապրանքների, ծառայությունների և աշխատանքների մրցույթներ.

- Ռիսկային մրցույթներ⁸,
- Միջինից բարձր ռիսկայնության մրցույթներ⁹,
- Բարձր ռիսկայնության մրցույթներ¹⁰,
- Կասկածելի տարրեր պարունակող մրցույթներ¹¹:

Ուսումնասիրությունն իրականացվել է ամսական կտրվածքով, որի բացված տվյալները ներկայացված են Հավելվածներում, իսկ ագրեգացված տվյալներն աղյուսակի տեսքով (տես աղյուսակներ 2-7):

Կենտրոնացվածության մասին ագրեգացված տվյալները ներկայացված են աղյուսակ 8-13-ում:

Մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ **ՇՀ վիճակագրությունը 2011թ հունվար-հունիս ժամանակաշրջանի համար բացակայում է:**

8 Մրցույթներ, որտեղ միավորի նվազագույն և առավելագույն գնային առաջարկների շեղումը 1.5 անգամից ավելի է:

9 Մրցույթներ, որտեղ միավորի նվազագույն և առավելագույն գնային առաջարկների շեղումը 2 անգամից ավելի է:

10 Մրցույթներ, որտեղ միավորի նվազագույն և առավելագույն գնային առաջարկների շեղումը 5 անգամից ավելի է:

11 Մրցույթներ, որտեղ միավորի նվազագույն և առավելագույն գնային առաջարկների շեղումը 10 անգամից ավելի է:

Աղյուսակ 2. Ռիսկային մրցույթների դինամիկան 2011թ. III եռամսյակ

	Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
Ընդամենը ուսումնասիրված շրջանակային համաձայնագրեր	854		264		81	
Ուսումնասիրված շրջանակային համաձայնագրերի պայմանագրային արժեքը, մլն դրամ	2743		254		15	
Ռիսկային համաձայնագրերի դասակարգումը	Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ պարանքների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ծառայությունների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ աշխատանքների գծով	
	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)
Ռիսկային մրցույթներ	436	48.3	25	9	47	58
Միջինից բարձր ռիսկայնության մրցույթներ	284	33	17	6	42	55
Բարձր ռիսկայնության մրցույթներ	68	7.6	2	0.8	28	35
Կասկածելի տարրեր պարունակող մրցույթներ	25	2.6	2	0.8	15	18
Ընդամենը նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների թվաքանակը	63		0		6	
Նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	7.3		0		7	
Հնարավոր տնտեսման չափը, հազ. դրամ	6327		0		197	
Հնարավոր տնտեսման չափի տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	0.2		0		0.9	
Ռիսկայնության ամփոփ գնահատականը	Միջին		Ցածր		Ցածր	

Աղյուսակ 3. Ռիսկային մրցույթների դինամիկան 2011թ. IV եռամսյակ

	Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
Ընդամենը ուսումնասիրված շրջանակային համաձայնագրեր	1396		370		168	
Ուսումնասիրված շրջանակային համաձայնագրերի պայմանագրային արժեքը, մլն դրամ	2638		404		8651	
Ռիսկային համաձայնագրերի դասակարգումը	Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ պարանքների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ծառայությունների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ աշխատանքների գծով	
	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)
Ռիսկային մրցույթներ	437	30	75	20	109	65
Միջինից բարձր ռիսկայնության մրցույթներ	293	21	55	15	98	58
Բարձր ռիսկայնության մրցույթներ	94	6.7	9	2.4	41	24
Կասկածելի տարրեր պարունակող մրցույթներ	48	3.4	1	0.3	20	12
Ընդամենը նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների թվաքանակը	58		5		23	
Նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	4		1.3		13.7	
Հնարավոր տնտեսման չափը, հազ. դրամ	28227		5957		550	
Հնարավոր տնտեսման չափի տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	10.7		14.7		0.0	
Ռիսկայնության ամփոփ գնահատականը	Բարձր		Բարձր		Ցածր	

2012թ.

Աղյուսակ 4. Ռիսկային մրցույթների դինամիկան 2012թ. I եռամսյակ

	Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
Ընդամենը ուսումնասիրված շրջանակային համաձայնագրեր	1732		409		41	
Ուսումնասիրված շրջանակային համաձայնագրերի պայմանագրային արժեքը, մլն դրամ	5461		25131		358	
Ռիսկային համաձայնագրերի դասակարգումը	Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ավարանքների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ծառայությունների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ աշխատանքների գծով	
	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)
Ռիսկային մրցույթներ	556	32	69	17	27	
Միջինից բարձր ռիսկայնության մրցույթներ	342	20	49	12		
Բարձր ռիսկայնության մրցույթներ	72	4.2	13	3		
Կասկածելի տարրեր պարունակող մրցույթներ	30	1.7	4	0.9		
Ընդամենը նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների թվաքանակը	83		6		2	
Նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	4.8		1.5		4.9	
Հնարավոր տնտեսման չափը, հազ. դրամ	11506		10467		539	
Հնարավոր տնտեսման չափի տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	2.1		0.4		1.5	
Ռիսկայնության ամփոփ գնահատականը	Միջին		Ցածր		Միջին	

Աղյուսակ 5. Ռիսկային մրցույթների դինամիկան 2012թ. II եռամսյակ

	Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
Ընդամենը ուսումնասիրված շրջանակային համաձայնագրեր	2481		462		137	
Ուսումնասիրված շրջանակային համաձայնագրերի պայմանագրային արժեքը, մլն դրամ	2854		342		126	
Ռիսկային համաձայնագրերի դասակարգումը	Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ավարանքների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ծառայությունների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ աշխատանքների գծով	
	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)
Ռիսկային մրցույթներ	950	38	56	12	112	82
Միջինից բարձր ռիսկայնության մրցույթներ	529	21	33	7	69	50
Բարձր ռիսկայնության մրցույթներ	110	4	4	0.9	2	1.5
Կասկածելի տարրեր պարունակող մրցույթներ	45	1.8	3	0.6	0	0
Ընդամենը նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների թվաքանակը	231		5		35	
Նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	9.3		1.1		25.5	
Հնարավոր տնտեսման չափը, հազ. դրամ	20495		590		214	
Հնարավոր տնտեսման չափի տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	7		1.7		1.7	
Ռիսկայնության ամփոփ գնահատականը	Բարձր		միջին		Միջին	

Աղյուսակ 6. Ռիսկային մրցույթների դինամիկան 2012թ. III եռամսյակ

	Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
Ընդամենը ուսումնասիրված շրջանակային համաձայնագրեր	1537		112		91	
Ուսումնասիրված շրջանակային համաձայնագրերի պայմանագրային արժեքը, մլն դրամ	5581		655		1040	
Ռիսկային համաձայնագրերի դասակարգումը	Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ապրանքների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ծառայությունների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ աշխատանքների գծով	
	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)
Ռիսկային մրցույթներ	468	30	21	19	74	81
Միջինից բարձր ռիսկայնության մրցույթներ	308	20	13	12	59	65
Բարձր ռիսկայնության մրցույթներ	69	4.5	2	1.8	37	41
Կասկածելի տարրեր պարունակող մրցույթներ	18	1.2	0	0	30	33
Ընդամենը նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների թվաքանակը	63		4		9	
Նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	4		3.6		10	
Հնարավոր տնտեսման չափը, հազ. դրամ	32655		1600		103	
Հնարավոր տնտեսման չափի տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	5.9		2.4		0.1	
Ռիսկայնության ամփոփ գնահատականը	Բարձր		միջին		Ցածր	

Աղյուսակ 7. Ռիսկային մրցույթների դինամիկան 2012թ. IV եռամսյակ

	Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
Ընդամենը ուսումնասիրված շրջանակային համաձայնագրեր	915		157		63	
Ուսումնասիրված շրջանակային համաձայնագրերի պայմանագրային արժեքը, մլն դրամ	3445		224		503	
Ռիսկային համաձայնագրերի դասակարգումը	Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ապրանքների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ ծառայությունների գծով		Ռիսկային տարրեր պարունակող մրցույթներ աշխատանքների գծով	
	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)	Քանակը	Տես. կշիռը (%)
Ռիսկային մրցույթներ	167	18	37	24	29	46
Միջինից բարձր ռիսկայնության մրցույթներ	83	9	23	15	21	33
Բարձր ռիսկայնության մրցույթներ	6	0.7	3	1.9	2	3.2
Կասկածելի տարրեր պարունակող մրցույթներ	0	-	0	-	1	1.6
Ընդամենը նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների թվաքանակը	51		0		3	
Նվ. գին առաջարկած, սակայն հաղթող չճանաչված մրցույթների տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	5.6		0		4.8	
Հնարավոր տնտեսման չափը, հազ. դրամ	11616				7.6	
Հնարավոր տնտեսման չափի տեսակարար կշիռը ամսվա ընդհանուրում, (%)	3.4				0.0	
Ռիսկայնության ամփոփ գնահատականը	Բարձր		Ցածր		Ցածր	

Աղյուսակ 8. Հաղթողների քանակային և գումարային կենտրոնացվածության ուսումնասիրությունը 2011թ. III եռամսյակ

Դիտարկվող ժամանակաշրջանը /ցուցանիշը		Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
		Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)
Հուլիս	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	96	27	99	80	-	-
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	77	75	40	35	-	-
Օգոստոս	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	97	45	94	1.9		
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	44	72	2.4	96	33	63
Սեպտեմբեր	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	94	39	65	22		
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	37	57	82	94	50	97
III եռամսյակ	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	96	37	86	35	-	-
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	53	68	43	75	42	80

Աղյուսակ 9. Հաղթողների քանակային և գումարային կենտրոնացվածության ուսումնասիրությունը 2011թ. VI եռամսյակ

Դիտարկվող ժամանակաշրջանը /ցուցանիշը		Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
		Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)
Հոկտեմբեր	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	95	33	99	90	100	12
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	40	76	52	68	0.0	48
Նոյեմբեր	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	90	47	93	74	42	9
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	32	52	96	97	73	67
Դեկտեմբեր	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	94	67	48	36	-	-
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	44	83	43	89	40	80
IV եռամսյակ	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	93	49	80	67	71	11
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	39	70	64	85	38	65

Աղյուսակ 10. Հաղթողների քանակային և գումարային կենտրոնացվածության ուսումնասիրությունը 2012թ. I եռամսյակ

Դիտարկվող ժամանակաշրջանը /ցուցանիշը		Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
		Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)
Հունվար	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	88	38	68	33	-	-
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	70	26	-	-	-	-
Փետրվար	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	96	37	95	80	90	14
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	86	90	93	67	7.3	78
Մարտ	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	96	28	100	61	93	41
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	78	54	0.7	63	6	53
I եռամսյակ	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	93	34	88	58	92	28
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	78	57	47	65	7	66

Աղյուսակ 11. Հաղթողների քանակային և գումարային կենտրոնացվածության ուսումնասիրությունը 2012թ. II եռամսյակ

Դիտարկվող ժամանակաշրջանը /ցուցանիշը		Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
		Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)
Ապրիլ	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	91	59	90	12	46	18
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	83	30	89	45	54	47
Մայիս	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	86	21	86	59	97	24
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	80	25	84	59	98	97
Հունիս	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	84	32	86	56	91	23
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	69	64	75	78	66	63
II եռամսյակ	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	87	37	87	42	78	22
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	77	40	83	61	73	69

Աղյուսակ 12. Հաղթողների քանակային և գումարային կենտրոնացվածության ուսումնասիրությունը 2012թ. III եռամսյակ

Դիտարկվող ժամանակաշրջանը /ցուցանիշը		Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
		Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)
Հուլիս	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	96	20	80	7	98	20
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	81	91	-	-		
Օգեստոս	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	87	19	98	18	98	6
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	76	8	18	98	77	1
Սեպտեմբեր	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	97	29	81	10	-	-
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	54	2	46	88	-	-
III եռամսյակ	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	93	23	86	12	98	13
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	70	34	32	93	77	1

Աղյուսակ 13. Հաղթողների քանակային և գումարային կենտրոնացվածության ուսումնասիրությունը 2012թ. IV եռամսյակ

Դիտարկվող ժամանակաշրջանը /ցուցանիշը		Ապրանք		Ծառայություն		Աշխատանք	
		Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)	Արժեքում (%)	Քանակում (%)
Հոկտեմբեր	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	92	41	87	85		
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	19	11	82	71	17	74
Նոյեմբեր	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	89	16	81	26		
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	20	73	61	82		
Դեկտեմբեր	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	96	41	87	36		
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	6	70	24	34	99	50
IV եռամսյակ	Խոշորագույն հաղթողների մասնաբաժինը	92	33	85	49	99	50
	Պարբերաբար հաղթողների մասնաբաժինը	15	51	56	62	17	74

Պետական ծախսերի արդյունավետության տեսանկյունից չափազանց կարևոր դեր ունի խոշորագույն հաղթողների խորքային ուսումնասիրությունը, որը ագրեգացված տեսքով ներկայացված է Աղյուսակ 14-20-ում¹²:

12 Ներկայացվել են միայն եռամսյակի կտրվածքով այն հաղթողները որոնց նկատմամբ պետությունը կուտակել է ապրանքների գծով՝ 30 մլն դրամից ավելի պարտավորություն, ծառայությունների և աշխատանքների գծով 15 մլն դրամից ավելի:

Աղյուսակ 14. 2011թ. III եռամսյակի խոշորագույն հաղթողները

Հաղթող մասնակցի անվանումը	Հաղթող մասնակցի նկատմամբ պետության կուտակած ընդհանուր պարտավորությունը, մլն. դրամ			Պարտավորության տեսակարար կշիռը եռամսյակում			Հաղթող մասնակցի հաղթած ՇՀ թվաքանակը			Թվաքանակի տեսակարար կշիռը եռամսյակում		
	Ապր.	Ծառ.	Աշխ.	Ապր.	Ծառ.	Աշխ.	Ապր.	Ծառ.	Աշխ.	Ապր.	Ծառ.	Աշխ.
Միկա Քորիորեյշն ՓԲԸ	341			12			24			3		
“Ֆեյշ” ՍՊԸ	815			30			136			16		
“Ունիվերսամ Ավան” ՍՊԸ	201			7			28			3		
“Սիթի Պետրոլ Գրուպ” ՍՊԸ	182			7			19			2		
“LUS գրուպ” ՍՊԸ	167			6			14			2		
“Ֆրիգեյթ” ՍՊԸ	281			10			7			1		
Արայ ՍՊԸ	165			6			1			0.1		
“Գագաթ” ՍՊԸ	137			5			3			0.4		
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	88			3			12			1		
“Արպանիվ” ՍՊԸ	50			2			8			0.9		
“Արիան Մոթորս” ՍՊԸ	48			2			2			0.2		
Գարանտսերվիս ՍՊԸ		74			29			7			3	
“Պարադիզ” ՍՊԸ		50			20			4			2	
“Արարատ Մոթորս” ՍՊԸ		34			13			2			1	
“ԷՄ ԲԻ ԵՄ ՆՅՈՒ” ՍՊԸ		22			9			3			1	
“Ձայնալարերը հեռացվածների միավորում” ՀԿ		30			12			1			0.4	
“Վիզա Կոնկորդ Հայաստանյան Մ/Ճ” ՍՊԸ		21			8			30			11	
Ընդամենը	2474	232		90.2	91.3		254	47		30	18	

Աղյուսակ 15. 2011թ. IV եռամսյակի խոշորագույն հաղթողները

Հաղթող մասնակցի անվանումը	Հաղթող մասնակցի նկատմամբ պետության կուտակած ընդհանուր պարտավորությունը մլն. դրամ			Պարտավորության տեսակարար կշիռը եռամսյակում			Հաղթող մասնակցի հաղթած ՇՀ թվաքանակը			Թվաքանակի տեսակարար կշիռը եռամսյակում		
	Ապր.	Ծառ.	Աշխ.	Ապր.	Ծառ.	Աշխ.	Ապր.	Ծառ.	Աշխ.	Ապր.	Ծառ.	Աշխ.
Միկա Քորփորեյնջ ՓԲԸ	620			24			21			2		
“Ֆելշ” ՍՊԸ	380			14			16			1		
“Ռնիվերսամ Ավան” ՍՊԸ	145			5			41			3		
“Սիթի Պետրոլ Գրուպ” ՍՊԸ	52			2			12			1		
“Մաքսիուր” ՍՊԸ	49			2			8			1		
“Երեքնուկ” ՓԲԸ	43			2			44			3		
“Արֆարմացիա” ՓԲԸ	124			5			11			1		
“Նատալի Ֆարմ” ՍՊԸ	220			8			119			9		
“Ֆարմ Ադամա”	39			1			4			0.3		
“Օլանդա” ՍՊԸ	36			1			43			3		
“Կոնտինենտոնթեքս” ՓԲԸ	30			1			19			1		
“Աբովյանի հացի գործարան” ՍՊԸ	30			1			9			0.6		
“Նյու-Ինթերնեյշնլ Բիզնես ֆարմ” ՍՊԸ	75			3			70			5		
“Երիտասարդ Վագրեր” ՍՊԸ	33			1			34			2.4		
“Օնլայն Պլյուս” ՍՊԸ	116			4			26			2		
“Այրնեթվորքս” ՍՊԸ	56			2			11			0.8		
Ա/Ձ Արթուր Մանուկյան	46			2			17			1.2		
“Անա ֆարմ” ՍՊԸ	40			2			1			0.1		
Գարանտսերվիս ՍՊԸ		134			33			20			5	
“ԷՄ ԲԻ ԵՄ ՆՅՈՒ” ՍՊԸ		59			14			5			1	
“Վիզա Կոնկորդ Հայաստանյան Մ/Ճ” ՍՊԸ		85			21			130			35	
“ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ Գրուպ” ՍՊԸ			8615			99.6			2			1.2
ԸՆդամենը	2135	278	8615	81	69	99.6	506	155	2	36	42	1.2

Աղյուսակ 16. 2012թ. I եռամսյակի խոշորագույն հաղթողները

Հաղթող մասնակցի անվանումը	Հաղթող մասնակցի նկատմամբ պետության կուտակած ընդհանուր պարտավորությունը մլն. դրամ			Պարտավորության տեսակարար կշիռը եռամսյակում			Հաղթող մասնակցի հաղթած ՇՀ թվաքանակը			Թվաքանակի տեսակարար կշիռը եռամսյակում		
	Ապր.	Մայ.	Յունի.	Ապր.	Մայ.	Յունի.	Ապր.	Մայ.	Յունի.	Ապր.	Մայ.	Յունի.
“Ֆլեշ” ՍՊԸ	279			5			3			0.2		
“Ունիվերսալ Ավան” ՍՊԸ	339			6			30			2		
“Սիթի Պետրոլ Գրուպ” ՍՊԸ	1119			21			78			5		
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	300			6			45			3		
“Կամար” ՓԲԸ	56			1			6			0.3		
“Աբովյանի հացի գործարան” ՍՊԸ	39			1			8			0.5		
“Ազաթ 777” ՍՊԸ	36			1			1			0.1		
“Գդակ” ՍՊԸ	75			1			35			2		
“Վայենսիա” ՀՀ ՍՊԸ	55			1			27			2		
“Տիգրան Մեծ” հրատարակչություն” ՓԲԸ	38			1			9			1		
“Նատալի Ֆարմ” ՍՊԸ	914			17			19			1		
“Երիտասարդ Վազրեր” ՍՊԸ	86			2			39			2		
“Անա ֆարմ” ՍՊԸ	348			6			1			0.1		
“Ֆարմ Ադաման” ՍՊԸ	244			5			1			0.1		
“Նյու-Ինթերնեյշնլ Բիզնես ֆարմ” ՍՊԸ	200			4			1			0.1		
“Գոռ” ՍՊԸ	151			3			13			1		
“Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա” ՍՊԸ	110			2			10			1		
“Մ.Լ.Ն. Ֆարմ” ՍՊԸ	90			2			3			0.2		
“ՀԳՀ Արենա” ՓԲԸ	75			1			1			0.1		
“Աշոտ Ղարազյոզյան” ՍՊԸ	59			1			4			0.2		
“Կոնտինենտալթեքս” ՓԲԸ	50			1			3			0.2		
“Արֆարմսցիա” ՓԲԸ	43.5			0.8			7			0.4		
“Վազա Ֆարմ” ՍՊԸ	43.4			0.8			2			0.1		
“Արմֆարմ” ՍՊԸ	31.4			0.6			1			0.1		
“Արսա և Ա” ՍՊԸ “		18			0			2			0	
Գարանտսերվիս ՍՊԸ		177			1			33			8	
“Ինթերոբյոթ” ՍՊԸ		65			0			84			21	
“Արմինկո” ՍՊԸ		74			0			8			2	
“Կարկումավոո” ՍՊԸ		62			0			21			5	
“Մոպտի Մեդիա Կենտրոն թիվի” ՓԲԸ		19			0			2			0	
“Պրոթեզաօրթոպեդիկ” ՍՊԸ		19			0			89			22	
“Պարադիզ” ՍՊԸ		24504			98			4			1	
“Վիզա Կոնկորդ Հայաստանյան Մ/Ճ” ՍՊԸ		31			0			34			8	
“Մ-ԲԻ-Ռ” ՍՊԸ		18			0			9			2	
“Բիլլ Սթոուն” ՍՊԸ			236			66			1			2
“ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ Գրուպ” ՍՊԸ			65			18			1			2
“Ալեքսերվ” ՍՊԸ			20			6			1			2
Ընդամենը	4779	24987	321	88	99	90	347	286	3	20	70	7

Աղյուսակ 17. 2012թ. II եռամսյակի խոշորագույն հաղթողները

Հաղթող մասնակցի անվանումը	Հաղթող մասնակցի նկատմամբ պետության կուտակյալ ընդհանուր պարտավորությունը մլն. դրամ			Պարտավորության տեսակարար կշիռը եռամսյակում			Հաղթող մասնակցի հաղթած ՇՀ թվաքանակը			Թվաքանակի տեսակարար կշիռը եռամսյակում		
	Ապր.	Ծառ.	Աշխ.	Ապր.	Ծառ.	Աշխ.	Ապր.	Ծառ.	Աշխ.	Ապր.	Ծառ.	Աշխ.
“Ֆլեշ” ՍՊԸ	475			17			22			1		
Միկա Քորիորեյն ՓԲԸ	126			4			2			0		
“Սիթի Պետրոլ Գրուպ” ՍՊԸ	213			7			28			1		
“Արպանիվ” ՍՊԸ	56			2			19			1		
“Կարկունավտո” ՍՊԸ	344	25		12	7		9	12		0	3	
“Ունիվերսամ Ավան” ՍՊԸ	361			13			32			1		
“Էլիտ-սպորտ” ՍՊԸ	38			1			7			0		
“Սմարթլայն” ՍՊԸ	69			2			277			11		
“Կոմպաս” ՍՊԸ	53			2			63			3		
“Մ.Լ.Ն. Ֆարմ” ՍՊԸ	280			10			1			0		
“Վեկար” ՍՊԸ	59			2			3			0		
“Նատալի Ֆարմ” ՍՊԸ	122			4			249			10		
“Կիա Մոթորս Արմենիա” ՓԲԸ ՍՊԸ	26			1			1			0		
“Հրաշք Այգի” ՍՊԸ	25			1			1			0		
“Օնլայն Պլյուս” ՍՊԸ	24			1			11			0		
“Մ.ԲԻ-Ռ” ՍՊԸ		35			10			14			3	
“Կայմ հեռուստաընկերություն” ՍՊԸ		18			5			3			1	
Արարատ Մոթորս ՍՊԸ		30			9			9			2	
Գարանտսերվիս ՍՊԸ		37			11			6			1	
“Վիվեկա” ՍՊԸ		17			5			4			1	
“Գեո Լոջիք” ՍՊԸ		39			11			22			5	
“Աստղաձոր” ՍՊԸ		39			11			25			5	
“Պոլիգրաֆբիզնես” ՍՊԸ			49			39			17			12
ԷՅԷՄՓԻՋԻ գրուպ ՍՊԸ			18			15			5			4
<<Ոսկան Երևանցի>> տպագրատուն-արտադրահրատարակչական ԲԲԸ			30			24			7			5
Ընդամենը	2271	239	97	80	95	77	725	70	29	29	21	21

Աղյուսակ 18. 2012թ. III եռամսյակի խոշորագույն հաղթողները

Հաղթող մասնակցի անվանումը	Հաղթող մասնակցի նկատմամբ պետության կուտակած ընդհանուր պարտավորությունը մլն. դրամ			Պարտավորության տեսակարար կշիռը եռամսյակում			Հաղթող մասնակցի հաղթած ՇՀ թվաքանակը			Թվաքանակի տեսակարար կշիռը եռամսյակում		
	Ապր.	Մայ.	Յունի.	Ապր.	Մայ.	Յունի.	Ապր.	Մայ.	Յունի.	Ապր.	Մայ.	Յունի.
“Ֆլեշ” ՍՊԸ	3364			60			27			2		
“Մանանա Գրեյն” ՍՊԸ	345			6			1			0.1		
“Սիթի Պետրոլ Գրուպ” ՍՊԸ	292			5			12			1		
“Ամիրիա Պալաս” ՍՊԸ	216			4			1			0.1		
“Թալգրիգ” ՍՊԸ	215			4			1			0.1		
“Սիսականի Հասկ” ՍՊԸ	158			3			1			0.1		
“Վիոլա” ՍՊԸ	107			2			7			0.5		
“Մաունթ” ՍՊԸ	31			1			3			0.2		
«ՏԻԳՏԱ» ՍՊԸ		41			6			1			1	
“Բևերային Ուոյ” ՍՊԸ		549			84			5			4	
“Էլ Էմ Փի Ջի Գրուպ” ՍՊԸ			996			96			4			4
“Ալեքսերով” ՍՊԸ			20			2			1			1
Ընդամենը	4727	590	1016	85	90	98	53	6	5	3	5	5

Աղյուսակ 19. 2012թ. IV եռամսյակի խոշորագույն հաղթողները

Հաղթող մասնակցի անվանումը	Հաղթող մասնակցի նկատմամբ պետության կուտակած ընդհանուր պարտավորությունը մլն. դրամ			Պարտավորության տեսակարար կշիռը եռամսյակում			Հաղթող մասնակցի հաղթած ՇՀ թվաքանակը			Թվաքանակի տեսակարար կշիռը եռամսյակում		
	Ապր.	Մայ.	Յունի.	Ապր.	Մայ.	Յունի.	Ապր.	Մայ.	Յունի.	Ապր.	Մայ.	Յունի.
“Մեդիսար” ՍՊԸ	639			19			9			1		
“Մանանա Գրեյն” ՍՊԸ	306			9			1			0		
“Սիթի Պետրոլ Գրուպ” ՍՊԸ	285			8			35			4		
Ֆ/Ա Գոռ Պետրոսյան	65			2			6			1		
Ֆ/Ա Զարգանդ Ալեքսանյան	55			2			5			1		
“Յունիքումի” ՓԲԸ	32			1			3			0		
Ֆ/Ա Իշխան Միրզոյան	31			1			3			0		
“ԷԼ ԷՍ ԼԻՖՏՍ” ՍՊԸ	400			12			1			0		
«Ուզավոր-Հայաստան» ՍՊԸ	263			8			1			0		
“Պրոմ տեստ” ՍՊԸ	120			3			1			0		
“Մեդիտեք” ՍՊԸ	638			19			4			0		
“Մուրան” ՍՊԸ	31			1			2			0		
“Արմենիա Թրավել+Մ” ՍՊԸ		75			34			45			29	
“Կայմ հեռուստաընկերություն” ՍՊԸ		20			9			5			3	
“Գարանտսերվիս” ՍՊԸ		29			13			8			5	
“Տիգուա” ՍՊԸ		39			18			1			1	
“Էլ Էմ Փի Ջի Գրուպ” ՍՊԸ			170			34			1			2
“Բիլլ Սթուն” ՍՊԸ			236			47			1			2
Ընդամենը	2864	163	406	83	73	81	74	59	2	8	38	3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2011թ. հուլիսից մինչև 2012թ. դեկտեմբերն ընդգրկող ՇՀ ուսումնասիրության արդյունքում մասնակիցների կողմից առաջարկված գներում նկատվել են մեծ տարբերություններ, ինչը որոշակիորեն վկայում է ինչպես հնարավոր կոռուպցիոն ռիսկերի այնպես էլ տեխնիկական սխալ բնութագրերի կազմման մասին: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները վերջին եռամսյակում էականորեն ավելանում է ռիսկային մրցույթների տեսակարար կշիռը, թե քանակային, թե գումարային առումով: Քանակային առումով ավելի բարձր ռիսկայնություն է նկատվում աշխատանքների ՇՀ-ում, իսկ գումարային առումով ավելի բարձր՝ ապրանքներում: Հաղթողների ուսումնասիրությունը փաստում է, որ առկա է խիստ բարձր կենտրոնացվածություն, հատկապես գումարային առումով: Մասնավորապես խոշորագույն մատակարարների մասնաբաժինը գնումների գումարային ծավալի մեջ միջինում կազմում է 90%, իսկ քանակային ծավալում միջինում մոտ 40%: Ի հակադրություն դրա պարբերական հաղթողների մասնաբաժինը գումարային առումով կազմում է միջինում մոտ 60%, իսկ քանակային առումով միջինում մոտ 50%:

Այս հանգամանքը, այլ հավասար պայմաններում, վկայում է այն մասին, որ խոշոր գործարքները իրականացվում են այն ընկերությունների հետ, որոնք պարբերաբար չեն մասնակցում մրցույթներին, ինչպես նաև պարբերական հաղթողներ չեն ճանաչվում: Նշված եզրակացությունն էլ ավելի է ամրապնդվում, երբ ուսումնասիրում ենք պարբերական հաղթողներին առնչվող տվյալները:

2011թ. համեմատ 2012թ. փոքր ինչ նվազել է մրցույթների ռիսկայնությունը, այնուհանդերձ վերոհիշյալ փաստերը հիմք են տալիս ՀՀ պետական գնումների համակարգի առյուծի բաժինը կազմող ՇՀ-ը գնահատել որպես խիստ կենտրոնացված և միջինից բարձր ռիսկային:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. Չնայած պատվիրատուները պարտավոր են հայտարարված գնման ընթացակարգի վերաբերյալ պատշաճ ծանուցել գրանցված բոլոր մասնակիցներին, դա ոչ միշտ են անում:
2. Երբեմն անհնարին է լինում տալ ՇՀ ձեռք բերվող գնման առարկաների տեխնիկական բնութագրերի լիարժեք և ամբողջական սահմանումը: Այս հանգամանքը շատ հաճախ հանգեցնում է նրան, որ պատվիրատուները նույն ընթացակարգի շրջանակներում ներառում են էապես տարբերվող տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքներ:
3. ՇՀ դեպքում անհնարին է որոշել ինչպես մասնակցի ինքնությունը, այնպես էլ ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը: Բացի այդ համակարգը ինտեգրված չէ, օրինակ էլեկտրոնային ստորագրության համակարգի հետ:
4. ՇՀ վիճակագրությունը 2011թ հունվար-հունիս ժամանակաշրջանի համար բացակայում է:
5. ՇՀ մասին տեղադրվող հաշվետվությունների պարբերականությունը կանոնակարգված չէ, իրականացվում է քառասյին կերպով, իսկ տեղեկությունները մատչելի չեն:
6. Նկատվում է հաղթողների մեծ կենտրոնացվածություն, ինչը չի նպաստում նոր գրանցված տնտեսավարող սուբյեկտների, հաղթող ճանաչվելուն:
7. Նկատվում է մրցույթների բարձր ռիսկայինության, առավելապես վերջին եռամսյակում:
8. Նկատվում է գնային առաջարկների միջև էական տարբերություններ, որոնք կարող են պայմանավորված լինել, ինչպես կոռուպցիոն ռիսկերով, այնպես էլ տեխնիկական բնութագրիչների ոչ ճիշտ սահմանմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հուլիս, 2011

Ապրանքներ

2011թ. հուլիսին ՇՀ շրջանակում իրականացվել է ապրանքների 231 մրցույթ, որի արդյունքում պետությունը կուտակել է շուրջ 888 մլն դրամի պարտավորություն: Չնայած, բոլոր նշված մրցույթներում որպես հաղթող մասնակցի որոշման չափանիշ է սահմանվել նվազագույն գնային առաջարկը, սակայն ոչ բոլոր դեպքերում է հաղթող ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած տնտեսավարող սուբյեկտը: Մասնավորապես, հուլիսին ապրանքների մասով կայացած 231 ՇՀ մրցույթներից 41-ում (շուրջ 17.7%) մրցույթի հաղթող են ճանաչվել ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած սուբյեկտները:

Հավելված 1. 2011թ. հուլիսին ապրանքների գծով ավելի բարձր գնային առաջարկով հաղթած ՇՀ մրցույթները

Պատվիրատու	Ապրանքի բնութագիր	Նվ. գնային առաջարկ	Նվ. գին առաջարկած մասնակից	Տվյալ մրցույթում հաղթող ճանաչված մասնակից	Հաղթող մասնակցի գնային առաջարկ	Հնարավոր տնտեսում /հազ. դրամ/
ՀՀ ԿԱ պետական եկամտների կոմիտե	Մոնիտոր Դելլ 19" LՄԴ	42,900	“Կոմպաս” ՍՊԸ*	«Ֆրիգեյթ» ՍՊԸ	48,500	168.0
Ջրային տնտեսության պետական կոմիտե	ՈՒՍԲ Ֆելշ Սարք 2ԳԲ	4,200	“Յունիքոմի” ՓԲԸ*	“ԼՍՍ գրուպ” ՍՊԸ	4,600	1.6
Ջրային տնտեսության պետական կոմիտե	ՍԴ-Ռ 700 ՄԲ բալկ	140	“Յունիքոմի” ՓԲԸ*	“ԼՍՍ գրուպ” ՍՊԸ	200	1.8
ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Թղթապանակ 1, 2 օղակով, լայնությունը 40 մմ, A4 ֆորմատի	700	“Արթուր Մարգարյան” Ա/Չ**	“Դի և Լի” ՍՊԸ	750	1.5
Ազգային անվտանգության խորհուրդ	Թղթապանակ 11, Ռեգիստրատոր, լայնությունը 8սմ, A4 ֆորմատի	655	“Արթուր Մարգարյան” Ա/Չ**	“Սմարթլայն” ՍՊԸ	680	5.0
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Թղթապանակ 11, Ռեգիստրատոր, լայնությունը 8սմ, A4 ֆորմատի	700	“Արթուր Մարգարյան” Ա/Չ**	“Սմարթլայն” ՍՊԸ	768	17.0
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Թղթապանակ 15, Պայուսակ պլաստիկ, ռեզինե կապով, լայնությունը 20 մմ	350	“Արթուր Մարգարյան” Ա/Չ**	“Սմարթլայն” ՍՊԸ	480	3.3
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Թղթապանակ 18, Արագակար, պլաստիկ A4 ֆորմատի բարակ	43	“Արթուր Մարգարյան” Ա/Չ**	“Սմարթլայն” ՍՊԸ	48	0.5

Ազգային անվտանգության խորհուրդ	Թղթապանակ 21, Բաղանթ 30 միկրոն / ֆայլ/	54	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Մեծ Ծիածան” ՍՊԸ	57	4.5
ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Թղթապանակ 22, ստվարաթղթից, արագակարով	54	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Մեծ Ծիածան” ՍՊԸ	60	0.6
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Թղթապանակ 28, Պլաստիկ 60 հատ թաղանթով A4 ֆորմատի	54	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	60	3.6
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Թղթապանակ 29, Պլաստիկ 100 հատ թաղանթով A4 ֆորմատի	1,280	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	1,440	1.0
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Թղթադարակ 2, մետաղական 4 դարակ	3,600	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	4,200	3.0
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Լրակազմ 8, Գրենական պիտոյքների սեղանի պտտվող հավաքածու 21 կտոր	2,750	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	2,760	0.1
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Դակիչ 11 /ձևկուտիչ/, Երկանցք, նախատեսված 40 էջ դակելու համար	560	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	588	0.3
Ազգային անվտանգության խորհուրդ	Ապակարիչ 3, Նախատեսված է կարիչով կարված թղթերը քանդելու համար	135	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	145	0.3
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Նշումների թուղթ կպչուն 2	190	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	192	0.2
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Նշումների թուղթ կպչուն 6	195	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	216	1.1
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Նշումների թուղթ կպչուն 7	220	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	240	1.0
Ազգային անվտանգության խորհուրդ	Նշումների թուղթ կպչուն 12	220	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	220	0.0
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Ամրակ 2	65	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	72	0.1
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Սոսինձ 5, չոր, չափազրված 40գր	125	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	Սմարթլայն ՍՊԸ	144	0.2
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն	Սոսինձ 7, Էնուլ-սիա, չափազրված 120 գր	260	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ***	“Սմարթլայն” ՍՊԸ	300	0.8

«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Ֆլունաստեր, Տուփի մեջ 12 գույն	200	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	228	1.4
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Մատիտ 3, Ռետիտով, ԽԵ	35	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	36	0.0
Ազգային անվտանգության խորհուրդ	Մատիտի միջուկ 3, Մեխանիկական մատիտի համար, 0.5 մմ տրամագծով	45	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Մեծ Ծիածան” ՍՊԸ	55	0.8
Ազգային անվտանգության խորհուրդ	Ռետին 1	60	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	70	0.6
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Ռետին 3	35	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	36	0.2
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Գրիչ 5, Թանաքով 0.5 - 0.7 մմ ծայրով / տարբեր գույներ /	550	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	648	2.9
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Քանոն 1	40	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	47	1.0
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Թանաք բարձիկի, 30 մլ / տարբեր գույներ /	155	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	178	0.5
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Ջնջիչ 7, Վրձինով, 20 մլ	180	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	198	2.7
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Սկոչ 1, Չափերը 48 մմ x 100 մ	130	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	150	2.2
«Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն»	Գրասենյակային գիրք 1, 200 թերթ A4 ֆորմատի կոշտ կազմով	1,320	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Մեծ Ծիածան” ՍՊԸ	1,500	0.2
Ազգային անվտանգության խորհուրդ	Գրասենյակային գիրք 5, 70 թերթ	480	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	564	5.9
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Ծրար 1	54	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	60	8.2
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Ծրար 3	29	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	30	0.9
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Ծրար 7	29	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	30	1.2
«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն»	Ֆաքսի թուղթ	735	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Սմարթլայն” ՍՊԸ	840	42.0

ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	Թուղթ 1	672	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Պոլիգրաֆ Բիզնես” ՍՊԸ	672	0.0
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Թուղթ 2	650	“Արթուր Մարգարյան” Ա/Ձ**	“Տիգրան Մեծ իրատարակչություն” ՓԲԸ	662	35.3
Ընդամենը						321.0

Տվյալների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ չստացված հնարավոր տնտեսումն այնքան էլ մեծ չէ (շուրջ 321 հազ. դրամ կամ ամսական ընդհանուր պարտավորության 0.04%): 2011թ. հուլիսին ՇՀ-ով կայացած մրցույթների արդյունքում հաղթող են ճանաչվել 26 ընկերություններ (ամսական կայացած մրցույթների 11.2%):

Հավելված 2. 2011թ. հուլիսին ապրանքների գծով ՇՀ մրցույթի խոշորագույն հաղթողներն ըստ գումարային չափանիշի13

Հաղթած մասնակցի անվանումը	Դիտարկվող ամսում պետության կուտակած պարտավորությունը հաղթած մասնակցի նկատմամբ	Դիտարկվող ամսում հաղթած մրցույթների թիվը	Դիտարկվող ամսում հաղթած մասնակցի միջին պայմանագրային արժեքը
“Միկա Քորփորեյշն” ՓԲԸ	300,584,013	13	23,121,847
“Ունիվերսամ Ավան” ՍՊԸ	201,155,200	28	7,184,114
“Ֆլեշ” ՍՊԸ	181,568,648	5	36,313,730
“Սիթի Պետրոլ Գրուպ” ՍՊԸ	170,583,970	16	10,661,498
Նշվածների հանրագումարը	853,891,831	62	19,320,297
Նշվածի տեսակարար կշիռը ընդհանուրում (%)	96.1	26.8	

Ինչպես տեսնում ենք խոշորագույն մատակարարներին է բաժին ընկնում ամսական գնումների գումարային ծավալի մոտ 96%, իսկ քանակային ծավալի մոտ 27%, ինչն այլ հավասար պայմաններում, վկայում է այն մասին, որ խոշոր գործարքներն իրականացվում են այն ընկերությունների հետ, որոնք պարբերաբար չեն մասնակցում մրցույթներին, ինչպես նաև պարբերական հաղթողներ չեն ճանաչվում: Նշված եզրակացությունն էլ ավելի է ամրապնդվում, երբ ուսումնասիրում ենք պարբերական հաղթողներին առնչվող տվյալները:

13 Ներկայացված են միայն այն մրցույթները, որոնցում պետության պայմանագրային պարտավորությունը գերազանցում է 10 մլն դրամը:

Հավելված 3. 2011թ. հուլիսին ապրանքների գծով 10 և ավելի ՇՀ մրցույթ հաղթողները

Հաղթած մասնակցի անվանումը	Դիտարկվող ամսում պետության կուտակած պարտավորությունը հաղթած մասնակցի նկատմամբ	Դիտարկվող ամսում հաղթած մրցույթների թիվը	Դիտարկվող ամսում հաղթած մասնակցի միջին պայմանագրային արժեքը
“Սմարթթայն” ՍՊԸ	2,199,894	78	28,204
“Ունիվերսում Ավան” ՍՊԸ	201,155,200	28	7,184,114
“Քլից Մեդիա” ՍՊԸ**	1,889,310	26	72,666
“Սիթի Պետրոլ Գրուպ” ՍՊԸ	170,583,970	16	10,661,498
“Միկա Քորփորեյշն” ՓԲԸ	300,584,013	13	23,121,847
“Մեծ Ծիածան” ՍՊԸ	5,880,805	12	490,067
Նշվածների հանրագումարը	682,293,192	173	6,926,399
Նշվածի տեսակարար կշիռը ընդհանուրում (%)	76.8	74.9	

Ծառայություն

2011թ. հուլիսին ՇՀ-ի շրջանակում իրականացվել է ծառայության 20 մրցույթ, որի արդյունքում պետությունը կուտակել է շուրջ 183 մլն դրամի պարտավորություն: Բոլոր նշված մրցույթներում որպես հաղթող մասնակցի որոշման չափանիշ է սահմանվել նվազագույն գնային առաջարկը, և պետք է փաստել, որ այս ամսում ծառայությունների մասով ռիսկային մրցույթներ չեն արձանագրվել, քանի որ մշտապես հաղթել է նվազագույն գնային առաջարկ ներկայացնողը: Հուլիսին ՇՀ-ով կայացած մրցույթների արդյունքում հաղթող են ճանաչվել 7 ընկերություններ (35%): Մեր կողմից փորձ է կատարվել ուսումնասիրել հաղթող մասնակիցների հետ կապված միտումները:

Հավելված 4. 2011թ. հուլիսին ծառայությունների գծով ՇՀ մրցույթի խոշորագույն հաղթողներն ըստ գումարային չափանիշի

	Հաղթած մասնակցի անվանումը	Դիտարկվող ամսում պետության կուտակած պարտավորությունը հաղթած մասնակցի նկատմամբ	Դիտարկվող ամսում հաղթած մրցույթների թիվը	Դիտարկվող ամսում հաղթած մասնակցի միջին պայմանագրային արժեքը
1	“Գարանտեքվիս” ՍՊԸ	73,930,900	7	10561557
2	“Պարադիզ” ՍՊԸ	50,025,000	4	12506250
3	“Արարատ Մոթորս” ՍՊԸ	34,155,690	2	17077845
4	«ԷՄ ԲԻ ԵՄ ՆՅՈՒ» ՍՊԸ*	22,438,000	3	7479333
	Նշվածների հանրագումարը	180,549,590	16	11,906,246
	Նշվածի տեսակարար կշիռը ընդհանուրում (%)	99	80	

Ինչպես տեսնում ենք խոշորագույն մատակարարներին է բաժին ընկնում ամսական գնումների գումարային ծավալի մոտ 99%, իսկ քանակային

ծավալի մոտ 80%, ինչն, այլ հավասար պայմաններում, վկայում է այն մասին, որ խոշոր գործարքները իրականացվում են այն ընկերությունների հետ, որոնք պարբերաբար չեն մասնակցում մրցույթներին, ինչպես նաև պարբերական հաղթողներ չեն ճանաչվում: Նշված եզրակացությունն էլ ավելի է ամրապնդվում, երբ ուսումնասիրում ենք պարբերական հաղթողներին առնչվող տվյալները:

Հավելված 5. 2011թ. հուլիսին ծառայությունների գծով 5 և ավելի ՇՀ մրցույթ հաղթողները

Հաղթած մասնակցի անվանումը	Դիտարկվող ամսում պետության կուտակած պարտավորությունը հաղթած մասնակցի նկատմամբ	Դիտարկվող ամսում հաղթած մրցույթների թիվը	Դիտարկվող ամսում հաղթած մասնակցի միջին պայմանագրային արժեքը
“Գարանտերվիս” ՍՊԸ	73,930,900	7	10,561,557
Նշվածի տեսակարար կշիռը ընդհանուրում (%)	40.3	35	

Պարբերական մեկ հաղթողին է բաժին ընկնում ամսվա կայացած ՇՀ-ի 35%, իսկ գումարային առումով 40%, ինչն արդեն նշանակում է, որ այս ֆիրմային կարելի է ընդգրկել «սպիտակ ցուցակում», որպես պատրաստված և նվազ ռիսկային պատվիրատու: Տվյալների համեմատությունը փաստում է, որ արժեքային առումով մրցույթներն ավելի կենտրոնացված են, քան քանակային առումով: Ավելին, պարբերական հաղթողների պարագայում միջին պայմանագրային գինը կազմում է շուրջ 10.5 մլն դրամ, մինչդեռ խոշորագույն հաղթողների դեպքում այն կազմում է շուրջ 12 մլն դրամ:

Աշխատանքներ

